

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

- 31 մայիսի 2003 թվականի N 192-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 15 (133), 16.06.03)
- 20 օգոստոսի 2003 թվականի N 361-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 23 (141), 01.10.03)
- 31 մայիսի 2004 թվականի N 427-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 15 (163), 01.07.04)
- 10 սեպտեմբերի 2004 թվականի N 823-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 23 (171), 15.10.04)
- 5 սեպտեմբերի 2005 թվականի N 833-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 22 (199), 15.09.05)
- 13 մարտի 2007 թվականի N 226-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 10 (250), 02.04.07)
- 22 նոյեմբերի 2007 թվականի N 1115-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 33 (273), 17.12.07)
- 12 հոկտեմբերի 2010 թվականի N 809-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 25 (377), 01.11.2010)
- 2 փետրվարի 2017 թվականի N 71-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 7 (576), 01.03.2017)
- 20 հուլիսի 2017 թվականի N 581-Ն (ՀՀ ԳՆԱՏ N 23 (592), 01.08.2017)

23 մայիսի 2002 թվականի N 11
քաղ. Երևան

**ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵՍՏԵՐ
ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

Սահմանել մրցույթ անցկացնելու համար թեստեր կազմելու կարգը (հավելված):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Մ. ԲԱԴԱԼՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵՍԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ

1. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթ անցկացնելու համար թեստերը կազմվում են <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ Օրենք) և սույն կարգին համապատասխան:

2. Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետերի բնագավառներին վերաբերող հարցաշարերը կազմում է քաղաքացիական ծառայության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակազմը, իսկ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի <<դ>> և <<զ>> ենթակետերի բնագավառին վերաբերող հարցաշարը՝ համապատասխան մարմինների աշխատակազմերը: Յուրաքանչյուր մրցույթ անցկացնելուց առնվազն երկու ամիս առաջ հարցաշարերը ներկայացվում են Խորհուրդ:

3. Հարցաշարերը, ըստ բնագավառների, բաղկացած են հարցերից (խնդիրներից): Հարցերը վերաբերում են համապատասխան բնագավառների վերաբերյալ կոնկրետ հարցադրումներին, իսկ խնդիրները՝ կոնկրետ իրավիճակների նկարագրությանը:

3¹. Կառուցվածքային ստորաբաժանման մեջ չներառված քաղաքացիական ծառայության պաշտոնների համար սույն կարգի 2-րդ կետով նախատեսված Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի <<դ>> և <<զ>> ենթակետերի բնագավառին վերաբերող հարցաշարն առնվազն պետք է ընդգրկի՝

ա) համապատասխան մարմնի ընդհանուր իրավասության հետ կապված հարցեր (խնդիրներ):

բ) ուժը կորցրած է ճանաչվել.

գ) քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնում աշխատելու ունակության ստուգման մասնագիտական հարցեր:

Կառուցվածքային ստորաբաժանման մեջ ներառված քաղաքացիական ծառայության պաշտոնների համար սույն կարգի 2-րդ կետով նախատեսված Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի <<դ>> ենթակետի բնագավառին վերաբերող հարցաշարն առնվազն պետք է ընդգրկի՝

ա) համապատասխան մարմնի ընդհանուր իրավասության հետ կապված հարցեր (խնդիրներ):

բ) ուժը կորցրած է ճանաչվել.

գ) ուժը կորցրած է ճանաչվել.

դ) քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնում աշխատելու ունակության ստուգման մասնագիտական հարցեր:

Առանձնացված ստորաբաժանման մեջ ներառված քաղաքացիական ծառայության պաշտոնների համար սույն կարգի 2-րդ կետով նախատեսված Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի <<դ>> ենթակետի բնագավառին վերաբերող հարցաշարն առնվազն պետք է ընդգրկի՝

ա) համապատասխան մարմնի ընդհանուր իրավասության հետ կապված հարցեր (խնդիրներ).

բ) առանձնացված ստորաբաժանման ընդհանուր իրավասության հետ կապված հարցեր (խնդիրներ).

գ) քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնում աշխատելու ունակության ստուգման մասնագիտական հարցեր.

3². Քաղաքացիական ծառայության յուրաքանչյուր պաշտոնի համար սույն կարգի 2-րդ կետով նախատեսված յուրաքանչյուր բնագավառի հարցաշարում ընդգրկված հարցերի (խնդիրների) քանակը պետք է պակաս չլինի թեստային առաջադրանքում տվյալ բնագավառի համար նախատեսված հարցերի քանակի եռապատիկից:

4. Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի «ա», «բ», «դ» և «զ» ենթակետերի բնագավառին վերաբերող հարցաշարերը, դրանցում ընդգրկված հարցերը (խնդիրները) և դրանց ճիշտ պատասխանները ուսումնասիրվում, անհրաժեշտության դեպքում համապատասխանեցվում են սույն կարգի պահանջներին, կողավորվում, համարակալվում են՝ ըստ բնագավառների և ըստ պաշտոնների խմբերի: Խորհրդի կամ համապատասխան մարմնի աշխատակազմը հարցաշարերը զետեղում է համակարգչում:

5. Մրցույթ անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ հարցաշարերն իրենց պատասխաններով հրապարակվում են՝ քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոնների համար Խորհրդի, իսկ քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների համար՝ համապատասխան մարմնի կողմից:

6. Համակարգչում առանձին զետեղվում է նաև կողավորված և համարակալված հարցերի (խնդիրների) երեք կամ չորս ենթադրյալ պատասխան, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է:

7. Թեստերը կազմվում են համակարգչային ծրագրի միջոցով համակարգչում նախօրոք զետեղված հարցաշարերի կողավորված հարցերից (խնդիրներից)՝ պատահական ընտրությամբ: Համակարգչային ծրագիրը, ընտրելով հարցը (խնդիրը), միաժամանակ դուրս է բերում վերջինիս ենթադրյալ պատասխանները և միասնականացնում:

8. Թեստերը կազմում են.

- քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի անցկացման համար՝ Խորհրդի ստեղծած մրցութային հանձնաժողովները.

- քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի անցկացման համար՝ համապատասխան մարմնի ստեղծած մրցութային հանձնաժողովները:

9. Մրցութային հանձնաժողովները թեստերը կազմում են մինչև թեստավորման փուլը սկսելը:

10. Յուրաքանչյուր մրցույթի դեպքում մասնակիցների համար կազմվում է մեկ ընդհանուր թեստ՝ սույն կարգին և թափուր պաշտոնի անձնագրով նախատեսված պահանջներին համապատասխան:

11. Թեստավորման առաջադրանքները մասնակցին կարող են առաջարկվել գրավոր կամ համակարգչի միջոցով:

12. Ուժը կորցրած է ճանաչվել:
